Հավելված N 3
ՀՀ կառավարության 2023 թվականի
մարտի 16-ի N 354 - Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՍՏԱՑՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻՆ ԾԱՆՈԹԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ

1. Բացի սույն որոշման N 1 հավելվածում նշված անձանցից էլեկտրոնային հսկողության արդյունքում ստացված տվյալներին ծանոթանալու իրավունք ունեն՝

1) քրեակատարողական ծառայության սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի պետը.

2) քրեակատարողական ծառայության ներքին անվտանգության բաժնի պետը և աշխատակիցները՝ ծառայողական քննության շրջանակներում.

3) քրեակատարողական ծառայության օպերատիվ բաժնի պետը և աշխատակիցները՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումների շրջանակներում.

4) քրեակատարողական հիմնարկի սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի պետը.

5) քննիչը.

6) դատախազը.

7) դատարանը.

8) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը, քրեակատարողական ոլորտը համակարգող տեղակալը, վերահսկողություն իրականացնող ստորաբաժանման քաղաքացիական ծառայողները.

9) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարը, օպերատիվ-հետախուզական գործունեության ոլորտը համակարգող տեղակալը, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ոստիկանության ծառայողները.

10) Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենը, օպերատիվ-հետախուզական գործունեության ոլորտը համակարգող

տեղակալը, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ազգային անվտանգության ծառայողները.

11) Մարդու իրավունքների պաշտպանը:

2. Սույն հավելվածի 1-ին կետի 5-10-րդ ենթակետով նախատեսված անձինք էլեկտրոնային հսկողության արդյունքում ստացված տվյալներին ծանոթանալու և ստանալու իրավունք ձեռք են բերում իրենց վերապահված լիազորությունների իրականացման շրջանակներում՝ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20.03.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ